որ այնքան հեռու չէր, եւ պատոիրեց գնալ ձի նստել եւ անմիջապէս ճանապարհ ընկնել: Այնուհետեւ նա խիստ մտերմութեամբ գրկեց Մարօին եւ ինձ, յետոյ բաժանուեցանք: Մենք շտապեցինք դէպի մեր վրանը:

Ճանապարհին Մարօն ինձ ասաց:

— Գնա՛յ, Ֆարհատ, լաւ ես անում, որ գնում ես, Վան քաղաքը կը տեսնես, բայց Սօնային չմոռանաս...

Այս խօսքը ինձ կասկածանքի մէջ գցեց, եւ ես հարցրի, թէ ի՞նչ մտքով էր ասում այդ:

— Սօնան սիրում է քեզ, Ֆարհատ, դու էլ նրան խօսք ես տուել... տղամարդը պէտք է իր խօսքը կատարէ...:

— Այս դու որտեղի՞ց գիտես:

— Ես բոլորը գիտեմ... ես գիտեմ, թէ դուք ինչպէս էք անցկացրել ձեր օրերը այն ժամանակ, երբ դու աշակերտ էիր նրա հօր տանը... ես ամէնը գիտեմ...

Ես բոլորովին շփոթուեցայ:

— Ո՞վ ասաց քեզ:

— Սօնան ինքը պատմեց ինձ: Նա այնպէս ցաւելով էր պատմում, որ ես չկարողացայ իմ արտասուքը պահել:

Ես ոչինչ չպատասխանեցի, նա շարունակեց խօսել.

— Դու գիտե՞ս, Ֆարհատ, Սօնան որքան անբախտ է. նրա մխիթարութիւնն այժմ դու ես. բայց եթէ դու էլ խաբես նրան, նա էլ չի ապրի:

Մարօի ամէն մի բառը ինձ վրայ կայծակի ներգործութիւն էր ունենում: Ես չգիտէի ինչ պատասխանեմ. նրա ասածները բոլորը ճշմարիտ էին. ես Սօնային խօսք էի տուել...

— Դու Սօնային խօսք ես տուել, — կրկնեց Մարօն, — լաւ չէ, երբ տղամարդն իր խօսքը չէ կատարում...

— Բայց եթէ աղջիկը չէ՞ կատարում...

— Նոյնպէս լաւ չէ:

Ես նկատեցի, Մարօի ձայնը զգալի կերպով դողում էր վերջին պատասխանը արտասանելու միջոցին:

Ես ասեցի:

— Դու էլ ինձ խօսք ես տուել...